ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 105/2014-Լ

Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների գիշերակացի ապահովման, տրանսպորտային և սննդի հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգում լրացում կատարելու մասին

03.10.2014թ. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-ին մասով,

Հրամայում եմ՝

1. Արդարադատության ակադեմիայի ռեկտորի 2014 թվականի մայիսի 23-ի թիվ 047/2014-Լ հրամանով հաստատված՝ <<Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների գիշերակացի ապահովման, տրանսպորտային և սննդի հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգը>> լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով՝

<<5. Եթե վերապատրաստումը կամ հատուկ ուսուցումը երկու կամ ավելի օր տևողությամբ կազմակերպվում է Երևան քաղաքի վարչական տարածքից դուրս, ապա վերապատրաստման կամ հատուկ ուսուցման տվյալ հատվածի օրերի հաշվարկով՝ սույն կարգի 3.3 կետում սահմանված չափով սննդի հետ կապված ծախսերի փոխհատուցում տրամադրվում է նաև այն ունկնդիրներին, ում վրա չեն տարածվում սույն կարգի 3-րդ կետի պահանջները:>>:

Ռեկտոր **Ռ.Մելիքյան**